Հավելված
«ՄՊՀ մասնաճյուղի Երիցյան վարժարան» ՍՊԸ-ի մասնակիցների
ընդհանուր ժողովի 2021 թվականի օգոստոսի 30-ի թիվ 5 Արձանագրության

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ, ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ. ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն Կանոնակարգը սահմանում է ՄՊՀ Մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) Երիցյան վարժարանի (այսուհետ՝ Վարժարան) աշակերտների ուսման վարձի զեղչման կարգը:

1.2 Վարժարանում կիրառվում են ուսման վարձի զեղչեր՝ ըստ սոցիալական խմբերի և առաջադիմության:

1.3 Հիմնադրի որոշմամբ ուսման վարձի զեղչեր կարող են սահմանվել այլ չափանիշների հիման վրա:

1.4 Ուսման վարձի զեղչը տրամադրվում է տնօրենի հրամանով:

1.5 Աշակերտի հեռացման (ազատման) և վերականգնման դեպքում (անկախ հիմքից) նախկինում տրամադրված զեղչը չի վերականգնվում:

II. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Պատշաճ վարքագիծ[1] ունենալու դեպքում ուսման վարձի զեղչ տրամադրվում է հետևյալ սոց իալական խմբերին.

2.1.1 առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին - 50%

2.1.2 միակողմանի ծնողազուրկ /միածնող/ երեխաներին - 25%

2.1.3 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխաներին - 25%

2.1.4 Մասնաճյուղում և Վարժարանում սովորող երկու և ավելի երեխա ունեցող ընտանիքի աշակերտներին (սկսած 2-րդից) – 25%

2.1.5 Մասնաճյուղի և (կամ) Վարժարանի աշխատակիցների երեխաներին - 25%

[1] Սույն Կանոնակարգի իմաստով աշակերտի պատշաճ վարքագիծը վարժարանի ներքին կանոնների պահպանումն է՝ կարգապահական տույժի բացակայությունը:

2.1.6 սոցիալապես անապահով ընտանիքների (որոնք հաշվառված են պետական սոցիալական ծառայությունների կողմից կիրառվող ընտանիքների ապահովության գնահատման համակարգում և ունեն անապահովության սահմանային միավորից բարձր միավոր) սովորողներին - 10%

2.2 Պատշաճ վարքագիծ ունենալու դեպքում սովորողներին ուսման վարձի զեղչ տրամադրվում է նաև գերազանց առաջադիմության և հանրապետական կամ միջազգային առարկայական օլիմպիադաներին մրցանակային տեղեր զբաղեցնելու համար.

2.2.1 տվյալ կիսամյակին նախորդող կիսամյակում կիսամյակային գերազանց (9 և 10) գնահատականներ ունեցող սովորողներին - 20%

2.2.2 տվյալ ուսումնական տարվան նախորդող ուսումնական տարում միջազգային և հանրապետական առարկայական օլիմպիադաներին դիպլոմներ ստացած աշակերտներին.

I կարգի դիպլոմ - 20%,

II կարգի դիպլոմ - 15%

III կարգի դիպլոմ - 10%

2.3 Առանձնահատուկ դեպքերում, հիմնադրի որոշմամբ ուսման վարձի զեղչ կարող է սահմանվել այլ չափանիշների հիման վրա:

2.4 Եթե սովորողը բավարարում է զեղչի՝ 2.1-2.2 կետերում սահմանված պայմաններին, ապա համապատասխան զեղչերը գումարվում են:

2.5 Ուսման վարձի զեղչ տրամադրվում է Ծնողի (Խնամակալի) դիմումի և զեղչման հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայության դեպքում:

III. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Աշակերտի ուսման վարձի զեղչը չեղարկվում է, եթե.

3.1.1 Աշակերտը խախտել է դպրոցի ներքին կանոնները կամ հասարակական կարգը, որի պատճառով տնօրենի հրամանով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

3.1.2 Վերացել են զեղչման հիմք հանդիսացած հանգամանքները:

3.2 Զեղչը չեղարկվում է տնօրենի հրամանով, ուսումնական մասի վարիչի զեկուցագրի հիման վրա 3.1 կետում նշված հանգամանքների առաջանալու պահից:

3.3 Ուսումնական մասի վարիչը զեղչը չեղարկելու մասին գրավոր իրազեկում է աշակերտի Ծնողին (Խնամակալին):

3.4. Զեղչը չեղարկելու մասին Հրամանի քաղվածքը կցվում է աշակերտի անձնական գործին: